սատու Խաչելեալն. վասն որոյ հրամայեաց ածել զՍ. Եպիսկոպոսն առաջի իւր Նոյնպէս և զմայր նորա Աննա, և յետ բազմադիմի հարցափորձի՝ արկ զնոսա 'ի կարծրագոյն տանջանս, և ապա նահատակեաց նախ զԱննա և յետ նորա զԿիւրեղ[1]. Ընդ սոսա կատարեցաւ և Արդան, որ էր գլուխ թովչաց իւրոց հաւատացեալ 'ի Քրիստոս, նոյնպէս բազումք 'ի կողմանս Ասորւոյ։ Որպէս և 'ի քաղաքին Ասկալոնացւոց և Գազացւոց, և 'ի քաղաքս քաղաքս Պաղեստինացւոց՝ յորս բնակեալ էին բազումք 'ի քրիստոնէից, քահանայք, աշխարհականք, անապատական միայնակեացք, և կանայք կուսակրօնք. քանզի կալեալ զբազումս 'ի նոցանէ նեղէին ազգի ազգի տանջանօք, և հերձեալ զորովայնս նոցա արկանէին դարի իրրեւ 'ի մսուրս եւ արձակէին 'ի վերայ մարմնոյ նոցա զկինճս և զխոզս. թող զոր արարին 'ի Կեսարիա և 'ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ 'ի Սեբաստիա ետ բանալ Ցուլիանոս զգերեզման սրբոյն Յովհաննու Մկրտչի, և զմնացորդս նշխարաց նորին արտաքս հանել և այրել հրով և զփոշին ցնդել յօդս։ Են որք ասեն թէ՝ չէր անդ մարմին սրբոյն, այլ կամեցեալ Ցուլիանոսի կատարել զկամս իւր՝ ետ հանել զայլ ոսկերս հաւատացելոց, որք մերձ կային Սրբոյ տապանին, զորս խառնեալ ընդ ոսկերս չանց, այրեցին եւ հողմով հոսեցին։ Եւ ետ կործանել զպղնձի պատկերս Քրիստոսի 'ի Փիլիպպեայ Կեսարիա, որպէս գրեցաք յառաջագոյն։ Զ'տային ինչ յագուրդ չարիքն խստացեալ արտի նորա՝ զոր ած 'ի վերայ հաւատացելոց յԱնտիոք և 'ի Պաղեստին, և առ զայրոյթ չարութեան իւրոյ, 'ի մեկնիլն 'ի Պարսս կոյս՝ մեծամեծս սպառնայր Քրիստոնէից, և պատուէր ետ շինել ամփիթէատրոն մեծ յԵրուսաղէմ, զի 'ի դարձին իւրում 'ի գազանամարտ մատուցէ զեպիսկոպոսունս, զքահանայս, զկրօնաւորս, եւ զամենայն նազովրեցիս։ Եւ ինքն զոհիւք եւ ըղձութեամբ դիմեաց Հասանիլ 'ի Տիզբոն, ուր և սատակեցաւ 'ի պատերազմին,

---

[1] Ի դարձին 'ի Բեթանիայ յԵրուսաղէմ՝ 'ի Ճանապարհին, ուր Տէրն զթզենին յամնքեցոյց, ցուցանեն զվէմն յորոյ վերայ հաստեալ խլեն զձեռն Ս. Կիւրղի, և մերձ նոյն տեղւոյ ցուցանեն զգերեզման սրբոյն, և մեր նորա Աննայի։ Տեղագիր Նիլոսի Եպիսկոպոսի Ատերմանցւոյ։